Պարոն/Տիկին Ա. Ղլիխանյանին, Հ. Ղազարյանին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան

« 23 » հունիսի 2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   – Անուշիկ Աղինյան,
   – Հրանուշ Սողոյան,
   – Լիլիթ Երեմյան:

2.Զբաղեցրած պաշտոնը - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի ավագ իրավաբան,

- սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ,

- սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները – ք. Տիրանա (Ալբանիա), 2023 թվականի հունիսի 18-22-ը.

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում) – ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցացիա (NARUC):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը) – մասնակցել «Առաջադեմ կին առաջնորդները

էներգետիկայում» նախաձեռնության շրջանակում կայանալիք «Չգիտակցված կողմնակալություն» թեմայով ուսուցմանը :

6.Քննարկված թեմաները (հարցերը) – Դասընթացի առաջին օրը՝ հունիսի 19-ին, ներկայացվել են թե ինպես բացառել չգիտակցված կողմնակալությունը, այն բացառելու դրական ազդեցությունը կազմակերպության շահերի վրա, ներկայացվել են ստրատեգիաներ, թե ինչպես բացահայտել, բացառել, հաղթահարել կամ կանխարգելել չգիտակցված կողմնակալությունը, քննարկվել են գենդերային հավասարության և սոցիալական ներառումը, չգիտակված կողմնակալությունը անձնական մակարդակում և աշխատավայրում: Դասընթացի 2-րդ օրը՝ հունիսի 20-ին, ներկայացվել են չգիտակցված կողմնակալությանն արձագանքելու, կոնֆլիկտների հաղթահարման մեխանիզմներ, քննարկվել են չգիտակցված կողմնակալությունը աշխատանքի ընդունման պրոցեսում, այդ թվում՝ հարցազրույցի ընթացքում, ինչպես ստեղծել ներառական միջավայր ադապտացման համար, բազմազանությունը, հավասարությունը և ներառականությունը և դրանց կարևորությունը, չգիտակցված կողմնակալությունը առաջխաղացման գործընթացում: Ներկայացվել է, թե ինչպես ստեղծել առավել ներառական ներգրավման գործընթաց: Դասընթացի 3-րդ օրը՝ հունիսի 21-ին, յուրաքանչյուր հանձնաժողով քննարկել և նախագծել է չգիտակցված կողմնակալության դրսևորումներից խուսափելու գործողությունների ծրագրեր, ներկայացվել են մենթորության և նեթվորքի կարևորությունը, մենթորության ծրագիր ստեղծելու գործընթացը:

7.Հանդիպումները, ելույթները.– մասնակիցների և բանախոսների հետ դասընթացի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ ներկայացված թեմաների վերաբերյալ (հարց ու պատասխան), ինչպես նաև բոլոր մասնակիցները ներկայացրել են իրենց երկրում առկա պրակտիկան: Բանախոսները քննարկվող թեմաների վերաբերյալ ներկայացրել են տեղեկատվություն տարբեր երկրների փորձի վերաբերյալ:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը – հետագա համագործակցություն և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցացիայի (NARUC) դասընթացներին մասնակցություն: Միաժամանակ, չգիտակցված կողմնակալությունը մասնակից կարգավորող հանձնաժողովներում բացառելու նպատակով գործողությունների ծրագրերի կազմում և իրագործում:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները-

Ակնկալվում է քննարկված գործողությունների ծրագրի իրականացման արդյունքում բացառել չգիտակցված կողմնակալության դրսևորումները հանձնաժողովում:

Գործուղվող ---------- 23.06.2023թ. ---------- **Ա. Աղինյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 23.06.2023թ. ---------- **Հ. Սողոյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 23.06.2023թ. ---------- **Լ. Երեմյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 419-ԳՔ

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Հրանուշ Սողոյան, սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ

Անուշիկ Աղինյան, իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական սպասարկման բաժնի ավագ իրավաբան

Լիլիթ Երեմյան, սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ

4. Գործուղման վայրը՝ ք. Տիրանա /Ալբանիա/

5. Գործուղման ժամկետները՝ 18.06.2023-22.06.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ:

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Հրանուշ Սողոյան*	*Անուշիկ Աղինյան*	*Լիլիթ Երեմյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)					

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

ամսաթիվը: 23.06.2023թ.

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)